Հավելված
Կրթության,գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2020 թվականի նոյեմբերի 23-ի
N 40-Լ հրամանի

Ընդունված է Շիրակի պետական
Համալսարանի 2020 թվականի
սեպտեմբերի 07-ին
ՈՒխ Ընդհանուր Ժողովի կողմից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՇՊՀ-ի Ուսանողական խորհուրդ) ՇՊՀ-ում գործող ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին է:

1.2 ՇՊՀ ՈՒխ-ն ապաքաղաքական և ապակուսակցական ուսանողական կառույց է, որը հիմնադրված է Շիրակի պետական համալսարանի ուսանողության կողմից և հանդիսանում է ՇՊՀ-ի համաբուհական ընդգրկում ունեցող Ուսանողական խորհուրդ:

1.3 ՇՊՀ-ի ՈՒխ առաքելությունից դուրս, առաքելությանը անհամապատասխան քաղաքական և կուսակցական գործունեություն չի կարող իրականացվել ՈՒխ գործունեության ընթացքում:

1.4 ՇՊՀ-ի ՈՒխ-ն արտահայտում և պաշտպանում է ընդհանուր բուհի ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, բարոյական, ստեղծարար, մշակութային, քաղաքացիական և հոգևոր զարգացմանը:

1.5 ՇՊԶ-ի ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է սույն Կանոնադրությանը համապատասխան՝ չհակասելով ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ՇՊԶ-ի Կանոնադրությանը: ՇՊԶ-ի ՈՒԽ Կանոնադրությունը ընդունվում է ՈՒԽ-ի Ընդհանուր Ժողովի կողմից և հաստատվում ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից:

1.6 ՇՊԶ-ի ՈՒԽ-ն ունի անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ և իր գործունեությամբ ու նվիրատվությամբ ձեռք բերած ֆինանսական միջոցները տնօրինելու իրավունք՝ ՇՊԶ-ում սահմանված ընթացակարգերի համաձայն:

1.7 ՇՊԶ-ի ՈՒԽ-ի ամբողջական անվանումն է՝ հայերեն՝ Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան հիմնադրամի ՈՒսանողական Խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий совет фонд Ширакского государственного университета имени М.Налбандяна, անգլերեն՝ Student council of the Shirak State University named after Nalbandyan Foundation.

1.8 ՇՊԶ-ի ՈՒԽ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Գյումրի, Պարույր Սևակ 4, Շիրակի պետական համալսարան:

2.ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՇՊԶ-ի ՈՒԽ-ի նպատակներն ու խնդիրներն են՝

1) պաշտպանել ուսանողների շահերը,
2) նպաստել ուսանողների քաղաքացիական ակտիվության, ուսանողների իրավագիտակցության բարձրացմանը, ինչպես նաև ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը,
3) նպաստել ուսանողների մասնակցության բարձրացմանը համալսարանում որոշումների կայացման գործընթացում,
4) նպաստել ուսանողների իրազեկվածության բարձրացմանը՝ կապված ուսանողների շահերի ու մարդու իրավունքների պաշտպանության հետ,
5) ներկայացնել համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ուսանողությանն առնչվող հարցեր,
6) մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
7) իրականացնել արդյունավետ, նպատակային ու ժողովրդավարական սկզբունքների հիման վրա գործունեություն,

8) նպաստել ուսանողական ինքնավարությանը, նպաստել համալսարանական, ակադեմիական նոր միջավայրի կերտմանը ուսանողական մասնակցության միջոցով,
9) միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, բարոյական, ստեղծարար, մշակութային, քաղաքացիական և հոգևոր զարգացմանը,
10) աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը բուհական միջավայրում,
11) ինչպես նաև լուծել սույն կանոնադրության 2.1. կետում չնշված ուսանողներին հուզող այլ խնդիրները:

2.2 ՇՊՀ-ի ՈՒԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով 2.1 կետում նշված նպատակներից ու խնդիրներից: Այն համագործակցում է ՇՊՀ-ում և բուհից դուրս գործող ուսանողական, երիտասարդական կառույցների, կազմակերպությունների, քաղաքացիական խմբերի, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային, համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով՝ թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներով:

2. 3 ՇՊՀ-ի ՈՒԽ-ն սահմանված կարգով կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն:

3. ՇՊՀ-Ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

3.1 ՈՒսանողական խորհրդի անդամների ընտրությունը իրականացնում է ՈՒԽ Նախագահությունը՝ ուսանողների դիմումների հիման վրա:

3.2 ՈՒԽ-ի անդամ կարող են դառնալ ՇՊՀ-ի 4 ֆակուլտետների և առանձին կարգավիճակ ունեցող ռազմական ամբիոնի ուսանողները, անկախ սոցիալական, կրոնական, ազգային, մշակութային, սեռային, ռասայական պատկանելիությունից, ովքեր հրամանագրված են որպես ՇՊՀ ուսանող:

3.3 ՈՒսանողական Խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է իմանա՝ ինչ նպատակներ ու առաքելություն ունի ՈՒԽ-ն և ինչ իրավունքներ ու պարտականություններ ունեն ՈՒԽ անդամները:

3.4 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի անդամն իրավունք ունի՝

- ընտրվել ՈՒԽ ղեկավար մարմիններում,
- դիմել առաջարկություններով, դիմումներով ու հարցումներով ՈՒԽ ղեկավար մարմիններին,
- մասնակցել որոշումների կայացմանը,
- հրաժարվել ՈՒԽ անդամությունից:

3.5 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի անդամի պարտականություններն են՝

- կատարել սույն Կանոնադրության պահանջներն ու ղեկավար մարմինների որոշումները /ՈՒԽ-ի Ընդհանուր Ժողով, Նախագահություն/,
- նպաստել որոշումների կայացման գործընթացի հնարավորինս թափանցիկությանը.
- աջակցել ՈՒԽ գործունեությանը,
- մասնակցել ՈՒԽ աշխատանքներին և նրա կողմից կազմակերպված միջոցառումներին,
- նպաստել ԲՈՒՀ-ում սովորող ուսանողների, քաղաքացիական ակտիվությանը,
- նպաստել ժողովրդավարական սկզբունքների պահպանմանն ու զարգացմանը ՇՊՀ-ի ՈՒսանողական խորհրդում:

3.6 Սույն Կանոնադրության դրույթների խախտման դեպքում ՈՒԽ անդամը ստանում է նկատողություն ՈՒԽ Նախագահության կողմից, իսկ խախտումը երկրորդ անգամ կրկնելու դեպքում հեռացվում է ՈՒԽ անդամությունից: Հեռացման հարցը որոշում է ՈՒԽ Նախագահությունը՝ հրավիրելով Նախագահության նիստ:

3.7 ՈՒԽ նիստերը դռնբաց են ցանկացած ուսանողի համար, եթե չի եղել այլ հիմնավոր որոշում ՈՒԽ Նախագահության կողմից: Եթե նիստերը փակ են անցկացվում, ՈՒԽ Նախագահությունը պետք է հանրային պարզաբանումներ ներկայացնի նիստում քննարկված հարցերի վերաբերյալ: Նիստին ներկա ուսանողները կարող են իրենց առաջարկությունները և առարկությունները ներկայացնել նիստի ընթացքում: Որոշումները ընդունված են համարվում ներկաների /50% +1/ ձայների քվեարկությամբ:

3.8 ՇՊՀ-ի ՈւԽ-ն իր գործունեությունը իրականացնում է կամավորության սկզբունքով:

3.9 ՇՊՀ ՈւԽ միջոցների օգտագործման ծախսերի հաշվետվությունները, ինչպես նաև նիստերի արձանագրությունները և կայացրած որոշումները պետք է հրապարակվեն խորհրդի պաշտոնական մեդիառեսուրսներով, հասանելի դառնան հանրությանը և համալսարանի ուսանողությանը:

4. ՇՊՀ-Ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

4.1 ՇՊՀ-ի Ուսանողական խորհրդի կառավարման մարմիններն են՝

- ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Ընդհանուր ժողովը,
- ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահությունը,
- Նախագահը:

5. ՇՊՀ-Ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

5.1 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի բարձրագույն կառավարման մարմինը ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Ընդհանուր Ժողովն է: Ընդհանուր Ժողովին լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում են ֆակուլտետային ուսանողական պատվիրակները:

5.2 ՇՊՀ ՈՒԽ Ընդհանուր Ժողովը ձևավորվում է ՇՊՀ ուսանողական պատվիրակների ընտրությամբ, և բոլոր պատվիրակները միասին հանդիսանում են ՇՊՀ ՈՒԽ Ընդհանուր Ժողովը:

5.3 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Ընդհանուր Ժողովի նիստը իրավազոր է, եթե ներկա են ուսանողների կուրսային պատվիրակների կեսից ավելին /50% +1 պատվիրակ/:

5.4 Ընդհանուր Ժողովի պատվիրակների կազմը համալրվում է տարեկան առնվազն մեկ անգամ՝ կազմակերպվող ֆակուլտետների պատվիրակների ուղղակի ընտրության միջոցով: Պատվիրակներն ընտրվում են ՇՊՀ-ի 4 ֆակուլտետների և Ռազմական ամբիոնի յուրաքանչյուր կուրսից՝ ըստ համամասնության. յուրաքանչյուր 25 ուսանողից՝ մեկ պատվիրակ, իսկ եթե կուրսում չի գերազանցում 25 հոգին, ապա 50% +1:

5.5 Ընտրություններին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերը, ինչպես նաև ասպիրանտները:

5.6 Ընտրությունը կատարվում է ըստ կուրսերի՝ ուսանողական ժողովներում: Ժողովը իրավազոր է, եթե ներկա են կուրսի ուսանողների կեսից ավելին: Ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, եթե ներկաների ձայների թվի պարզ մեծամասնությամբ այդ մասին այլ որոշում չի կայացվում: Եթե երկու անգամ հրավիրված ժողովին չի մասնակցում ուսանողների կեսից ավելին, ապա ուսանողական ժողովը կարող է որոշում ընդունել և ընտրությունները կազմակերպել ներկա ուսանողների մասնակցությամբ /բացառությամբ, եթե հրավիրված ժողովին չի մասնակցում բուհի ուսանողների ընդհանուր թվի 30 տոկոսը/: Ընտրված է համարվում

առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն: Հավասար քվեների դեպքում տեղի է ունենում վերաքվեարկություն:

5.7 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Ընդհանուր ժողովի կազմը ենթարկվում է փոփոխության, եթե Ընդհանուր ժողովի կազմի 50% + 1 մեծամասնություն կազմող ուսանողները ավարտում են իրենց ուսումնառությունը Շիրակի պետական համալսարանում:

5.8 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան առնվազն երկու անգամ՝ ՈՒԽ-ի Նախագահության կողմից: Անհրաժեշտության դեպքում ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահությունը կարող է հրավիրել արտահերթ ժողով: Ընդհանուր ժողովի անդամների 30 տոկոսի պահանջով կարող է գումարվել արտահերթ ժողով :

5.9 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Ընդհանուր ժողովը՝

1) Նախագահության կազմից ընտրում է ՈՒԽ նախագահ, ՈՒԽ փոխնախագահ, ՈՒԽ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ՝ բաց, ուղիղ քվեարկությամբ,
2) կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ է կատարում ՈՒԽ Կանոնադրության մեջ,
3) լսում և հաստատում է ՈՒԽ Նախագահության տարեկան հաշվետվությունը,
4) քննարկում և սահմանում է ՈՒԽ-ի տարեկան գործունեության կարևորագույն ուղղությունները և առաջիկա տարվա ծրագրային առաջնայնությունները,
5) ընտրում է ՇՊՀ ՈՒԽ Վերստուգիչ հանձնաժողովի նախագահին և քարտուղարին,
6) որոշում է կայացնում ՈՒԽ-ի գործունեության դադարեցման և վերակազմավորման վերաբերյալ,
7) իրականացնում է Խորհրդի նպատակներից ու խնդիրներից բխող այլ գործունեություն:

6. ՇՊՀ-Ի ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

6.1 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահության անդամներն են՝ մՈՒԽ Նախագահը, փոխնախագահը, քարտուղարը, հանձնաժողովների նախագահները, ինչպես նաև ՇՊՀ-ի 4 Ֆակուլտետների ֆակուլտետային և Ռազմական ամբիոնի ՈՒԽ-ների նախագահները:

6.2 ՇՊՀ ՈՒԽ Նախագահությունը կազմակերպում է ՇՊՀ ՈՒԽ առօրյա գործունեություն և աշխատանքները:

6.3 ՇՊՀ ՈՒԽ Նախագահությունը իրականացնում է ՇՊՀ Ընդհանուր ժողովի կողմից հաստատված որոշումները:

6.4 Լսում և քննարկում է ուսանողների ներկայացրած դիմումները և առաջարկությունները

6.5 Իրականացնում է ՈՒԽ-ի Ընդհանուր Ժողովի որոշումները:

6.6 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահության անդամներից նախագահը և փոխնախագահը ընտրվում են Ընդհանուր Ժողովի կողմից՝ ՈՒԽ-ի Ընդհանուր Ժողովի կազմից երկու տարի ժամկետով: ՈՒԽ քարտուղարը նշանակվում է ՈՒԽ Նախագահի կողմից:

6.7 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահը, ՈւԽ-ի փոխնախագահը և ՈՒԽ-ի քարտուղարը չեն կարող միաժամանակ ֆակուլտետային ՈւԽ-ի նախագահի, հանձնաժողովների նախագահի, հանձնաժողովների քարտուղարի լիազորությունները զբաղեցնել կամ զբաղեցնել ՈՒԽ Նախագահության կողմից իրենց պաշտոնի հետ անհամատեղելի համարվող այլ պաշտոն:

6.8 ՇՊՀ ՈւԽ Նախագահ և փոխնախագահ կարող են առաջադրվել այն ուսանողները, որոնց վերջին երկու կիսամյակի ՄՈԳ-ը առնվազն 70 միավոր է: ՇՊՀ ՈՒԽ Նախագահն առաջադրվում է ինքնառաջադրման կամ ուսանողների կողմից առաջադրման կարգով:

6.9 ՇՊՀ ՈՒԽ Նախագահության ընտրությունը կատարվում է Ընդհանուր Ժողովի կողմից:

6.10 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահի և փոխնախագահի ընտրությունը կատարվում է փակ՝ գաղտնի քվեարկությամբ: Առավելագույն ձայներ ստացած /50%+1/ կամ երկու և ավել թեկնածուների դեպքում առաջին տեղը զբաղեցրած թեկնածուն ստանձնում է ՈՒԽ-ի Նախագահի, քվեների մեծամասնությամբ երկրորդ տեղը զբաղեցրած թեկնածուն՝ փոխնախագահի պաշտոնները: Որպես փոխնախագահի առանձին թեկնածու կարող է առաջադրվել ՈՒԽ նախագահի ընտրությունից զատ ցանկացած թեկնածու, ով համապատասխանում է վերընշյալ չափորոշիչներին:

6.11 ՇՊՀ ՈՒԽ քարտուղարը վարում է համապատասխան արձանագրությունները: Քարտուղարը նաև պատասխանատու է ՈւԽ մեդիա ռեսուրսների կառավարման և ՈւԽ նյութերի հանրայնացման և թափանցիկության ապահովման համար:

6.12 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահությունը նիստեր է գումարում առնվազն ամսական մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում ՈՒԽ-ի Նախագահությունը կարող է հրավիրել արտահերթ նիստ:

6.13 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահության անդամների /50%+1/ մասնակցության դեպքում Նախագահության կայացրած որոշումներն իրավազոր են:

7. ՇՊՀ ՈՒԽ ՆԱԽԱԳԱՀԸ

7.1 Գործում է սույն Կանոնադրությամբ ՇՊՀ ՈՒԽ-ին վերապահված հարցերի շրջանակներում:

7.2 Ընդհանուր Ժողովի նիստին հանդես է գալիս առնվազն տարին մեկ անգամ՝ ՇՊՀ ՈՒԽ-ի գործունեության մասին հաշվետվությամբ:

7.3 Հետևում է ՇՊՀ ՈՒԽ Նախագահության որոշումների կատարմանը:

7.4 Չի կարող իրականացնել այս Կանոնադրությանը անհամապատասխան և ՇՊՀ-ի ուսանողական նախաձեռնող հիմնադիր խմբի Հռչակագրի նպատակներին չհամապատասխանող գործունեություն:

7.5 Վարում է Նախագահության նիստերը, վարում է ՈՒԽ Ընդհանուր ժողովի նիստերը /եթե չի եղել այլ որոշում կամ առաջարկ/:

7.6 Կարող է հրավիրել Նախագահության արտահերթ նիստեր:

7.7 ՈՒԽ Նախագահը կարող է ստեղծել ՈՒԽ հանձնաժողովներ և ՈՒԽ-ի ներսում գործունեություն ծավալող այլ կառույցներ:

7.8 ՈՒԽ Նախագահը նշանակում է ՈՒԽ քարտուղարին:

7.9 Հանդես է գալիս ՇՊՀ-ի ՈՒսանողական խորհրդի անունից:

7.10 ՇՊՀ ՈՒԽ նախագահը կարող է առաջադրվել կամ ինքնաառաջադրվել որպես ՇՊՀ ՀՍ ուսանողական ներկայացուցչի թեկնածու:

7.11 Համաձայնագրեր և պայմանագրեր է կնքում ՇՊՀ-ի ՈՒԽ-ի անունից:

7.12 Նախագահը նշանակում է ՈՒԽ մշտական և ժամանակավոր հանձնաժողովների նախագահներին՝ բացառությամբ Վերստուգիչ հանձնաժողովի նախագահից:

7.13 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահի՝ իր լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշման կայացման դեպքում, ՈՒԽ-ի նախագահը հրաժարականի դիմում է ներկայացնում ՈՒԽ-ի Ընդհանուր Ժողովին, ինչից հետո Ընդհանուր Ժողովը կազմակերպում է արտահերթ ընտրություններ: Մինչև արտահերթ ընտրությունների անցկացումը ՈՒԽ-ի Նախագահի լիազորությունները իրականացնում է փոխնախագահը:

7.14 Արտահերթ ընտրություններ կազմակերպվում են նաև, եթե ՈՒԽ-ի փոխնախագահը և քարտուղարը Ընդհանուր Ժողովին հրաժարականի դիմում են ներկայացնում:

7.15 Պաշտոնավարման սահմանված ժամկետը լրանալու կամ ՇՊՀ-ում ուսումն ավարտելու դեպքում, բացառությամբ ուսումը մագիստրատուրայում շարունակելու դեպքից, ՇՊՀ ՈւԽ-ի Նախագահը, փոխնախագահը և քարտուղարը վայր են դնում իրենց լիազորությունները: Այդ դեպքում հայտարարվում են ՇՊՀ ՈւԽ Նախագահության նոր ընտրություններ:

7.16 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի փոխնախագահը Նախագահի բացակայության ժամանակ վերջինիս լիազորմամբ /լիազորագիր/ ողջ ծավալով կատարում է Նախագահի պարտականությունները: Փոխնախագահը պատասխանատու է բուհի ներքին ուսանողական հարցերի, հանձնաժողովների բնականոն աշխատանքի, քաղաքացիական և ժամանցային, կրթական և գիտական միջոցառումների կազմակերպման համար:

8.ՇՊՀ-Ի ՈՒԽ-Ի ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

8.1 ՇՊՀ ֆակուլտետի ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող մարմինը **ֆակուլտետի ՈՒսանողական խորհուրդն** է:

8.2 ՇՊՀ ֆակուլտետային ուսանողական խորհուրդը /ՖՈՒԽ/ ձևավորվում է կարգավիճակից բխող և ընտրովի անդամներից: ՇՊՀ Ռազմական ամբիոնի ուսանողական խորհրդի ընտրություններն անցկացվում են ՇՊՀ ֆակուլտետային ուսանողական խորհրդի կարգով:

8.3 Ֆակուլտետային ուսանողական խորհրդում ի պաշտոնե նշանակված անդամները տվյալ ֆակուլտետում բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա բոլոր բաժինների կուրսերի ավագներն են:

8.4 Կուրսի ավագն ընտրվում է կուրսի ուսանողների ընտրությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ /50% + 1/:

8.5 Կուրսի ավագի լիազորությունների ժամկետը տվյալ կուրսի ուսումնառության ժամանակահատվածն է, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ կուրսի ավագը հրաժարվում է իր լիազորություններից կամ կուրսի ուսանողների պարզ մեծամասնությամբ որոշվում է ընտրել նոր ավագ:

8.6 Ֆակուլտետային ուսանողական խորհրդում ընտրովի անդամներն են ուսանողական ներկայացուցիչները:

8.7 Ընտրություններում քվեարկելու իրավունք ունեն տվյալ ֆակուլտետի բոլոր այն ուսանողները, ովքեր հրամանագրված են որպես ՇՊՀ ուսանող:

8.8 Ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահության ընտրություններում թեկնածություններն առաջադրվում են ուսանողների դիմումների հիման վրա:

8.9 Ֆակուլտետի ՈՒսանողական խորհրդի ուսանողական ներկայացուցիչների ընտրությունն իրականացվում է պարզ քվեարկությամբ /50% + 1/ ընտրության միջոցով: Ֆակուլտետի ՈՒԽ յուրաքանչյուր կուրսից ընտրվող անդամների թիվը որոշվում է ըստ համամասնության՝ մինչև յուրաքանչյուր 100 ուսանողից մեկ ներկայացուցիչ:

8.10 Ընտրությունը կատարվում է ըստ կուրսերի՝ ուսանողական ժողովներում: Ընտրությունը համարվում է կայացած, եթե ներկա են տվյալ ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թվի կեսից ավելին /50% + 1 ուսանող/: Եթե երկու անգամ հրավիրված ժողովին չի մասնակցում ուսանողների կեսից ավելին, ապա ՖՈՒԽ-ի նախագահությունը կարող է որոշում ընդունել ընտրությունները կազմակերպել ներկա ուսանողների մասնակցությամբ, բացառությամբ եթե հրավիրված ժողովին չի մասնակցում ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թվի առնվազն 30 տոկոսը: Ընտրությունը կատարվում է պարզ ուղիղ /50% + 1/ քվեարկությամբ, եթե ներկաների ձայների մեծամասնությամբ այդ մասին այլ որոշում չի կայացվում: Ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն: Հավասար ձայների դեպքում տեղի է ունենում վերաքվեարկություն:

8.11 Ֆակուլտետային ուսանողական խորհուրդը հաշվետու է ՈՒԽ Նախագահությանը:

8.12 Ֆակուլտետային ուսանողական խորհրդի Նախագահության կազմում են ՖՈՒԽ-ի Նախագահը և քարտուղարը: Ֆակուլտետային ուսանողական խորհրդի Նախագահության անդամները ընտրվում են երկու տարի ժամկետով:

8.13 Ֆակուլտետի ՈՒԽ-ն փակ քվեարկությամբ իր կազմից ընտրում է ֆակուլտետի ՈՒԽ նախագահ, նախագահի կողմից նշանակվում է ՖՈՒԽ քարտուղար: ՖՈՒԽ նախագահը և քարտուղարը հաշվետու են ՇՊՀ ՈՒԽ նախագահությանը:

8.14 Ֆակուլտետային ուսանողական խորհրդի նախագահը ընտրվում է ֆակուլտետային խորհրդի անդամներից՝ ի պաշտոնե նշանակված կուրսի ավագների և ընտրությամբ ձևավորված ուսանողական ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությամբ:

8.15 Ֆակուլտետային ՈՒԽ նախագահի և քատուղարի լիազորությունները դադարում են ՈՒԽ-ի նախագահության որոշմամբ՝ Ֆակուլտետային ՈւԽ-ի նախագահության

նկատմամբ տվյալ ֆակուլտետի ուսանողների կեսից ավելիի կողմից անվստահություն հայտնելու պարագայում:

8.16 Ֆակուլտետի ՈՒԽ-ն նիստ է գումարում ամսական առնվազն երկու անգամ. արտահերթ նիստ գումարվում է ֆակուլտետի ՈՒԽ նախագահի, ՖՈՒԽ անդամների /50% + 1/ պահանջով կամ ՇՊՀ ՈՒԽ նախագահության որոշմամբ: Նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են ֆակուլտետային ՈՒԽ անդամների կեսից ավելին, որոշումներն ընդունվում են ներկաների թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

8.17 Ֆակուլտետի ՈՒԽ-ն կազմակերպում է ֆակուլտետի ՈՒԽ-ի աշխատանքները՝ համալսարանի ՈՒԽ-ի նպատակներին և գործունեության հիմնադրույթներին համապատասխան:

9. ՇՊՀ-Ի ՈՒԽ-Ի ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

9.1 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի հանձնաժողովները իրենց գործունեության ընթացքում հաշվետու են ՈՒԽ նախագահությանը, բացառություն է կազմում Վերստուգիչ հանձնաժողովը, որը հաշվետու է ՈՒԽ բարձրագույն մարմնին՝ Ընդհանուր ժողովին:

9.2 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի մշտական հանձնաժողովները կազմված են հանձնաժողովի նախագահից, հանձնաժողովի քարտուղարից և հանձնաժողովների առաքելությանը համապատասխանող մասնագիտական ծրագրով ուսումնառություն ստացող բուհի այն ուսանողներից, ովքեր ցանկություն են ունեցել ընդգրկվել համապատասխան դիմումով և հաստատվել տվյալ հանձնաժողովի նախագահի որոշմամբ, որպես հանձնաժողովի անդամ:

9.3 Հանձնաժողովների նախագահության (հանձնաժողովի նախագահ, հանձնաժողովի քարտուղար) ընտրությունները կազմակերպում է ՈՒսանողական խորհրդի նախագահությունը՝ բացառությամբ Վերստուգիչ հանձնաժողովի: Հանձնաժողովների անդամների ընտրությունը կազմակերպվում է ՈՒսանողական խորհրդի նախագահության կողմից՝ ՖՈՒԽ-երի կողմից առաջադրված թեկնածուներից:

9.4 Հանձնաժողովների նախագահության անդամները ընտրվում են բաց քվեարկությամբ՝ երկու տարի ժամկետով:

9.5 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի հանձնաժողովների նախագահները ի պաշտոնե մասնակցում են նախագահության նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

9.6 ՈՒԽ նախագահությունը ըստ անհրաժեշտության իրավազոր է ձևավորել հանձնաժողովներ և նշանակել հանձնաժողովների պատասխանատուներ:

9.7 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի մշտական և ժամանակավոր հանձնաժողովներն են՝

1) Գիտական հանձնաժողով /մշտական/,
2) Մարդու իրավունքների հանձնաժողով /մշտական/,
3) Մշակույթի, սպորտի, սոցիալական հարցերի, ժամանցի և միջոցառումների կազմակերպման հանձնաժողով /մշտական/,
4) Վերստուգիչ հանձնաժողով /մշտական/,
5) Փոխանակման ծրագրերի/ակադեմիական շարժունակության հանձնաժողով,
6) Հասարակայնության հետ կապերի և լրատվության հանձնաժողով,
7) Հետազոտությունների, մոնիթորինգի և ուսումնասիրության հանձնաժողով,
8) Պրակտիկայի կազմակերպման/մասնագիտական զարգացման հանձնաժողով,
9) Էթիկայի հանձնաժողով:

10.ՇՊՀ-Ի ՈՒԽ-Ի ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

10.1 Վերստուգիչ հանձնաժողովն ունի հակակոռուպցիոն և վերստուգիչ գործառույթ և առաքելություն:

10.2 Վերստուգիչ ժողովին հաշվետու են ՈՒԽ նախագահության նախագահը, ֆակուլտետային խորհուրդների, ռազմական ամբիոնի խորհրդի, հանձնաժողովների նախագահները:

10.3 Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է ՈՒսանողական խորհրդի գործունեության կանոնակարգային համապատասխանության և ֆինանսական միջոցների ու գույքի օգտագործման արդյունավետության և ողջամտության նկատմամբ վերահսկողությունը:

10.4 Վերստուգիչ հանձնաժողովը մշտադիտարկում է ՈՒԽ նախագահի, ՈՒԽ նախագահության և ֆակուլտետային ՈՒԽ-ների գործունեությունը և տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս Ընդհանուր Ժողովում:

10.5 Հանձնաժողովի նախագահը լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում է ՇՊՀ ՈՒԽ Նախագահության նիստերին:

10.6 Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է միայն Ընդհանուր Ժողովին: ՈՒԽ բոլոր մարմինները ու ստորաբաժանումները պարտավոր են 15-օրյա ժամկետում հանձնաժողովի ղեկավարին տրամադրել իրենց ունեցած տեղեկությունները իրենց ստորաբաժանումների մասին:

10.7 Վերստուգիչ հանձնաժողովը կարող է իրականացնել իր առաքելությունից բխող այլ գործունեություն Շիրակի պետական համալսարանում:

11. ՇՊՀ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

11.1 ՇՊՀ-ի կառավարման մարմիններից ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդի ուսանողական ներկայացուցիչների ընտրությունը կազմակերպում և իրականացնում է ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահությունը ըստ «Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասի և ՇՊՀ կանոնադրության 28-րդ կետի:

11.2 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահության անդամները, բացառությամբ ՇՊՀ ՈՒսանողական խորհրդի նախագահի, չեն կարող ընտրվել ՇՊՀ Հոգաբարձուների խորհրդում, որպես ուսանողական ներկայացուցիչ: ՇՊՀ ՈՒԽ նախագահը կարող է առաջադրվել կամ ինքնաառաջադրվել որպես ՇՊՀ ՀԽ ուսանողական ներկայացուցչի թեկնածու:

11.3 ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդի ուսանողական ներկայացուցիչների թեկնածու կարող են առաջադրվել ՇՊՀ-ի բարձր առաջադիմություն /70 և բարձր ՄՈԳ/ հասարակական, քաղաքացիական ակտիվություն ունեցող ուսանողները: ՇՊՀ-ի ՈՒԽ-ի Նախագահությունը ՇՊՀ-ի ուսանողների դիմումների հիման վրա ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդում ուսանողական ներկայացուցիչներին ընտրում և ներկայացնում է լիազոր մարմնին:

11.4 ՇՊՀ-ի Գիտական խորհրդում ուսանողական ներկայացուցիչների ընտրությունը կազմակերպում և իրականացնում է ՇՊՀ-ի ՈՒԽ-ն:

11.5 ՇՊՀ-ի ՈւԽ-ի Նախագահության որևէ անդամ չի կարող ընտրվել ՇՊՀ Գիտական խորհրդում, որպես ուսանողական ներկայացուցիչ:

11.6. Գիտական խորհրդի ուսանողական ներկայացուցիչների թեկնածու կարող են առաջադրվել ՇՊՀ-ի բարձր առաջադիմություն /70 և բարձր ՄՈԳ/ գիտակրթական, մշակութային ակտիվություն ունեցող սովորողները: ՇՊՀ-ի ՈւԽ-ն ՇՊՀ-ի ուսանողների դիմումների հիման վրա ընտրում է ՇՊՀ-ի Գիտական խորհրդում ուսանողական ներկայացուցիչներին:

11.7 ՇՊՀ-ի Հոգաբարձուների խորհրդում ուսանողական ներկայացուցիչները չեն կարող լինել այն ուսանողները, ովքեր հանդիսանում են ՇՊՀ-ի Գիտական խորհրդում ուսանողական ներկայացուցիչներ:

12. ՇՊՀ-Ի ՈՒԽ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

12.1 ՇՊՀ-ի ՈՒԽ-ի ֆինանսական միջոցները գոյանում են ՇՊՀ-ի հատկացումներից, դրամաշնորհներից, հանգանակություններից, նվիրատվություններից և ՇՊՀ-ի Կանոնադրությանը, սույն Կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

13. ՇՊՀ-Ի ՈՒԽ-Ի ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

13. 1 ՇՊՀ ՈՒԽ-ն վերակազմավորվում է ՇՊՀ ՈՒԽ Ընդհանուր Ժողովի անդամների 2/3-ի որոշմամբ:

13.2 Ընդհանուր ժողովի կողմից 13.1-րդ կետով նշված որոշումն ընդունելուց հետո սույն կանոնադրությամբ սահմանված կարգով անցկացվում է ՇՊՀ ՈՒԽ նոր ընտրություններ:

14. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից սույն կանոնադրության հաստատումից հետո Շիրակի պետական համալսարանում գործող ՈՒսանողական Խորհուրդը դադարեցնում է իր գործունեությունը:

2.Նախաձեռնող խումբը նախարարի կողմից սույն կանոնադրության հաստատումից ի վեր հանդիսանում է ՇՊՀ-ի ուսանողական Ընդհանուր Ժողովը և ՇՊՀ-ի նոր Ուսանողական Խորհուրդը:

3.Անցումային դրույթները կրում են ժամանակավոր բնույթ և ՈՒԽ ձևավորումից մեկ տարի հետո դրանք դուրս ենք գալիս ՈՒԽ Կանոնադրությունից:

4.Նախաձեռնող խումբը հանդիսանում է ՇՊՀ –ի ՈՒԽ Ընդհանուր ժողովըմեկ տարի ժամկետով:

5.Նախաձեռնող խմբից է ընտրվելու Ընդհանուր Ժողովը, նոր ՈՒսանողական Խորհրդի նախագահը, փոխնախագահը և ֆակուլտետային ՈՒԽ նախագահները:

6.Ընդհանուր Ժողովը ընտրում է Ընդհանուր Ժողովի կազմից ինքնառաջադրման կամ ներկա ուսանողների կողմից առաջադրման սկզբունքով առաջադրված թեկնածուներից՝ ՇՊՀ-ի ՈՒԽ Նախագահ /ով համապատասխանում է կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներին/:

7.Ֆակուլտետային ՈՒԽ Նախագահը նշանակվում է ՈՒԽ Նախագահի կողմից, ինքնառաջադրման սկզբունքով Ընդհանուր Ժողովի տվյալ ֆակուլտետի պատվիրակ հանդիսացող ուսանող: Նշանակված ՖՈՒԽ Նախագահը իր հերթին նշանակում է ՖՈՒԽ քարտուղար: